դիսաւորութեամբ հռչակեց նրան դիկտատոր։ Վրա հասան քաղաքի զօրամասերը և երդուեցին հնազանդ լինել նորընտիր դիկտատորին։ Այդ քայլին իր անվերապահ հաւանութիւնը տուեց և Ազդ. Խորհուրդը։ Այսպիսով, մարտի առաջին օրերից սկսած՝ Երեւանի բովանդակ իշխանութեան մարմնացումը դարձաւ Արամը, որ իր զարմանալի նրբամտութեան ու տակտի շնորհիւ կարողացաւ շաղկապել շրջանի բոլոր գործօն տարրերը, աշխատանքի լծել ամենքին։ Ձեռք-ձեռքի տուած Դրօի, զօր. Սիլիկեանի ու Փիրումեանի, նահանգական կոմիսար Ս. Թորոսեանի, քաղաքական կուսակցութիւնների և կառավարական ու հասարակական մարմինների հետ՝ նա երեւան բերեց արտակարգ եռանդ և, ամենատաղնապալի վայրկեանին, ձեռնհասութեամբ վարեց Արարատեան դաշտի հայ ժողովրդի ճակատագիրը։

Ըստ ձևի, Արամի դիկտատոր նշանակելուց յետոյ էլ իշխանութիւնը մնաց Ազդ. Խորհրդի ձեռքին։ Ցատուկ Կոմիտէի փոխարէն գործում էր առանձին մի մարմին, որի անդամները կոչւում էին վարիչներ։ Այս մարմինը փաստօրէն Արարատեան դաշտի կառավարութիւնն էր, որի նախագահն ու զինուորական գործերի վարիչը Արամն էր, ներքին գործոց վարիչը՝ Սահակ Թորոսեանը, պարենաւորմանը՝ Մկ. Մուսինեանը, ելեւմտականը՝ Յովհ. Մելիքեանը, ինքնապաշտպանութեանը՝ Արշ. Աստուածատրեանը։ Փիչ յետոյ, մարմնի կազմի մէջ մտան նոր անձեր՝ Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կամսարականը, բժ. Յ. Տէր-Միքայէլեանը (Օվին) և այլն. եղան և ուրիշ փոփոխութիւններ։ Այս մարմինը մնաց իշխանութեան գլուխ մինչեւ Հայաստանի Խորհրդի ու կառավարութեան ժամանումը Թիֆլիսից։

Երեւանի կառավարութեան, ի վերջոյ յաջողուեց, բանալ ռազմադիտական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, մաքրել խռովութիւնների բոյն ծառայող մահմեդական վայրերը և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ շրջաններում։ Նա միջոցներ ձեռք առաւ դասալքութեան և աւազակութիւնների դէմ։ Նրա տրամադրութեան տակ կային 10—12,000 մարդուած ու բաւական կարգապահ զինուորներ։ Դրամական դրութիւնը կարգաւորելու համար պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրա, որը տալիս էր անտրտունջ, անդամ սիրով։ Երբեք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնն ու հասարակութիւնը այնպիսի համերաշխ միութիւն չեն կազմել, քան 1918 թուի գարնան և ամառուայ պատմական ամիսներին։